

## ԽՈՐՀԻԴԱՖՈՒԹԻՒՆ

**Ի 21.** Յունվարի այս 1873 ամբ մինչ  
ընթեռնում էի Սանկտպետերբուրգskia  
Ենթականութիւն անուանեալ օրբստորական  
լրագրի նոյն աւուր 21 համարն, ստացայ  
և սուրբ Շմբուղ Խջմիածնի ուխտէն ի  
լոյս ընծայեալ Երարատ ազդաօդուտ  
Վաստգրոյ 1872 ամի Դակամբերի ամսա-  
տեռակին, և այս երկուց հանդիսից՝ ո-  
մանց հասուածոց իմաստից միօրինակ  
իբր առ մինպատակ ուղղութիւնն՝ առիթ  
ետ ինձ այս համառօս խորհրդածութիւ-  
նըն յեզուլ իմակարդակ քարտիզիս:

Լոնդոն Անգլիական մայրաքաղաքի Վա-  
տուածաշունչ գրոց հնախօսական ընկե-  
րութեան մէկ ժողովի մէջ այնպիսի հե-  
տաքրքրական գրուած է մէջ բերուել, որ  
սեպագրաց յարգն և կարեորութիւնն  
կրկին և կրկին հաստատելով՝ ցոյց է առ-  
ւել ուսումնական աշխարհին՝ թէ սեպա-  
գրաց զնութիւնը ո՛չ թէ միայն կարէ  
հնագոյն ժամանակաց արտաքին պատմու-  
թեանց ազռա անցից վերաց լոյս ծագել,  
այլ և Վասուածաշունչ սուրբ գրոց հը-  
նապատում աւանդութեանց և պատմու-  
թեանց ևս կյածողէ կանգնել բազում  
ծմբարտութեանց ապացոյց: Գիտնական  
Ամիթ յառաջ է մասուցել գրաւոր աե-  
ղիկութիւն ինչ, թէ ինքն (Ամիթ) գտել է  
սեպագիր արձանագրութիւն, որոյ պատ-  
ճէնն նորաշաղախ կաւի վերայ դրոշմած,  
թրծած, կղմնարսձեւ աղիւսակիներ ձեւա-  
ցուցած լինելով, նա ո՛չ միայն ստացել  
է այն աղիւսները, այլ և նոցա ընթերցա-  
նութեան հնարն ի ձեռս է բերել: Եյս  
սեպաձեւ նշանագրաց արձանագրութիւնն

կապարունակէ յինքեան ջրհեղեղի իրիք  
մեծի պատմութիւնն, (արդեօք համաշ-  
խարհականին է, թէ այլ մասնաւորի,) և  
պատմութիւնն զրուած է յաւուրս Ասուր-  
բանապալ թագաւորի Ասորեստանեացց,  
Քրիստոսէն 668 ամօք յառաջ: Խմաս  
արձանագրութեան է այս վաղնջական ան-  
ցից պատմութիւնը, զոր Պ. Ամիթն ընծա-  
յեալ է Քրիստոսէն 1600 ամօք յառաջ  
անցած ժամանակին:

Զառամեալ ծերունի ոմն Աիզեթ ա-  
նուն՝ պատմել է Խզդուրար թագաւորին,  
թէ ինքն Աիզեթ ի վաղ անցեալ աւուրս  
հրամանաւ զից շնուր է տապան, և նո-  
րա մէջ զետեղել է իւր գերդաստանն և  
ծառայքն, և իւրաքանչեւր գազանաց և  
վայրի էրէոց տեսակները, և իւր բոլոր  
ստացուածքն, որ վերահաս սպառնացեալ  
ջրհեղեղէն աղատուի. յետոյ պատմել է  
ջրհեղեղի անցքն և ստորագրել է իւրա-  
շեն տապանի ծովագնացութիւնը, որ վեր-  
ջապէս զիայ է առել Կիզեր լերին վերայ  
Ասորեստանէն գէպ յարեւելս: Տապանի  
ի վլուի լերին հանգչելց յետ՝ Աիզեթ  
արձակիել է առաջ մէկ աղաւնի, յետոյ  
մէկ ծիծեռնիկ, և վերջապէս՝ մէկ տպաւէ:  
Օկնի որոյ ինքն ևս գուրս է եկել տա-  
պանէն և սեղան է շնուր և զոհ մատու-  
ցել դից:

Եյս նոր գիւտն շարժել է գուստում-  
նական գործունէութիւնն Անգլիական և  
Գաղիւսական արևելագիւտաց, որք ցարդ  
կպատաղէին սեպագրաց հետազոտութեան  
վերայ, և յայնմ հետէ սկսել են ապագ-  
րութեան մէջ ի վեր երեւել այս առար-  
կայի վերաց զանազան խորհրդածութիւնք,  
որոց առաջինն է երեւելի արևելագէտ

Գառւլինսոնի գրուածն, որ ի Լոնդոնի ի լոյս ընծայեալ Եթէնէա լրագրի (Համար 2354) հրատարակել է, թէ այսնորազիւտ աղիւսակը Ամիթ գիտնականի են լրիւ չափ անկասկածելիք, և յաւելցուցել է իւր զանազան նկատմունք վասն այսր կարեւոր արձանագրութեան։ Օհինի նորա խօսիւ է դարձեալ այս առարկայի վերայ նշանաւորն Օսպերտ՝ իւր գասախօսութեանց մէջ։

Ես թէպէտ չունիմ իղձ և զօրութիւն միջամուխ լինել այս առարկայի քննադատութեան մէջ, բայց այսքան յայտնի է որ Վրիստոսէն 668 տարի յառաջ՝ ըստ Սոսուածաշունչ սուրբ գրոց պատմութեան՝ Սոորեստանեայց թագաւորն էր Սենեքերիմայ որդի \* ) Սոորդան, որ գուցէ Եսուրբանապալ ևս կանոււանվեր։

Իսկ Վրիստոսէն 1600 տարի առաջ, էր այն ժամանակն՝ երբ Յովսէփ Նահապեան արդէն վախճանել էր, և Մովսէս՝ գեռ ծնած չէր, և Խորայէլացիք Եղիպտոսի մէջ սկսել էին բազմանալ, և Փարաւոնների հալածանաց ենթարկել, մինչ Յոր Սոսացւոց երկրութեան կծաղկէր. և որդիքն Երրահամու ընդ խաւար հեթանոսութեան ընտանինային յԵղիպտոս ։

Իզդուրար՝ որ աշխարհի թագաւորն էր, այս ահղ զրուած չէ, և ինձ ևս ուրեք այդ անունն լսել կամ ընթեանուլ՝ պատահած չէ, և թէ պատահած ևս լինի՝ գոնէ այժմ միտքս չէ։ Վրիստոսէն 1600 տարի առաջ՝ ըստ պատմութեան Որբոյն Մովսէփի Խորենացւոյն, գուցէ թէ և

ըստ ժամանակագրութեան Աշուիրիոսի՛ էր Սլմամիղը, քան զոր՝ ոչ յառաջ մինչեւ ի Ամենոս և ի Աներրոդ և յԵսուուր, և ոչ յետոյ՝ մինչեւ ի Սենեքերիմ՝ գտանի Խզդուրար թագաւոր։ Գուցէ թէ Խզդուրար՝ որ Աստուածատուր նշանակէ, ոչ էր յատուկ անուն ուրուք թագաւորի, այլ մականուն նորա, ընծայեալ վասն բարելաւութեանց, այսու ամենայնիւ ոչ նըշմարի՝ թէ որոյ՝ գաւառի կամ քաղաքի թագաւոր էր։ Գիտնական կաճառն հնաւիսուից՝ թէ ոչ ստուգէր զայս ամենայն, արևելագէտն Գառւլինսան ոչ հրատակէր զիւր հաւանութիւն, ո՛վ թէ ի՞նչ ցանկալի և հետաքննութեան արժանաւոր յօդուած պիտի լինի՝ այն Եթէնէա հանդիսի մէջ զետեղած խորհրդածութիւնն Երդեօք ։ Եսի ջրհնդեղն է խոստվանել երեկի հնագէան, թէ Պեկալիսնի, որովհետեւ ժամանակն, 1600 ամն՝ որքան հեռափէ է մեռում համաշխարհական ջրհնդեղն՝ յԱստուածաշունչ սուրբ գրոց գուշակեալ ժամանակն, այնքան մերձենում է Պեկալիսնեան ջրհնդեղն ժամանակաց։ Յիշրաւի է այս արձանագրութեան մէջ չէ երեսում ։ Եսի անունն, և ոչ Երարատի անունն, ու ամենայն պատմական ստուգութիւնները, զոր միանգամ Սոսուածաշունչ մտաւեանն ունի աւանդեալ, որպէս թէ անուններն փոխած՝ մի և նոյն անցից գծապրութեան հաւատարիմ ընդօրինակութիւնն է։

Նըիեց զիւնատկան Պարունիներէն բազում անգամ լսել եմ, թէ կայ կարծիք՝ որ Մելքիսեդեկ էր նոյն ինքն՝ նահապետըն ։ Ես, որոյ անուն Տրեխց լեզուաւ Եօախ յորջորջի, և կնշանակէ երկրագործ

(\*) Դ. Թարդ ԺԹ. 37. — Եսայ. Լե. 38.

մշտի, և թէ՝ Ես իւրինն հարիւր յիսուն  
ամել մինչ լրացցց Մասեաց կողմն, ուր ե-  
զե առաջն հարիւրամեակն Ոսկեդար  
անուանեալ, գար խաղաղութեան և ար-  
դարութեան, որոյ էր ինքն էրկրորդ նա-  
խահայրն մարդկութեան և նահապետ, և  
քահանոյ, և թագաւոր, յետոյ շալկեց  
Եղամաց ոսկեբքն՝ զորս պահել էր տա-  
պանի մէջ ջրհեղեղի ապականութենէն, և  
առարաւ թաղեց Գողգոթայ, (գոլգոտ, կամ  
գոլգաֆա, լեռան գլխոյ,) և ինքն Մել-  
քիսեղեկ անուամբ, (թագաւոր խաղա-  
ղութեան և արդարութեան ոսկեգարու, )  
թագաւորից երկու քաղաքի վլրայ, Ա-  
րուսաղէմի և Վաղէմի \*), որոց միջոցն է  
Զիթենեաց լեռան, որոյ ձիթով ըստ Կա-  
րեկացւոյն՝ իւղեցաւ, և թէ մինչեւ Երա-  
համու ժամանակն ապրեցաւ, և նորա սպա-  
սաւորութեամբ թաղվեցաւ ոչ հեռի ի  
տեղւոցէն՝ ուր արդէն թաղեալ կային ոս-  
կերք նախասասեղծին: Խնչէս բազումք կա-  
յին՝ Եղին՝ Պետկալիսն անուն ընծայողք,  
ոչ սակառք կան և Քսիսութիւ կոչումն  
նուիրադք, և ո՞վ կարէ երաշխաւոր լինել  
թէ մի և նոյն բառն սեղագրով գծեալ՝  
մինչ մինչ Քսիսութիւ կընթեռնու, միւսն  
կարէ Վիզիթ ընթեռնուլ, մինչ մին Մա-  
սիս կընթեռնու՝ միւսն կարէ՝ Կիզիթ ըն-  
թեռնուլ, մինչ մին զմի և զնոյն բառն  
Ճշմարիս Սատուած կընթեռնու, միւսն  
ըստ իւրում հեթանոսական մտահասու-  
թեան՝ կարէ զիք հասկանալ:

Մի՞ թէ բազումք գարեր են անցել այ-  
նուշեաւ, մինչ զիսնականի միւսմ պա-

տահել է սեպագրի մէջ մէկ անուն առաջ  
Անրիդութիւ ընթեռնուլ, և յետոյ ընդ  
անցանել մետասան ամաց՝ մի և նոյն սե-  
պագրի արձանագրութեան մէջ նոյն բա-  
ռըն՝ Քաղաքիդութիւ ընթեռնուլ \*), մինչ  
միւս զիսնականն աւելի սրարիբ աչօք զրի-  
նելով Քելիդութիւ էր ընթերցեալ \*\*):  
Եթէ զիսնականն Ամիթ յայտնած լինէր՝  
թէ այն սեպաձեւ գծերով արձանագրեալ  
կաւակերա աղիւսան՝ աշխարհի ո՞ր կողմն է  
գտել, ի՞նչ հանգամանօք է գտել, կա-  
րելի էր գուշակել ինչ. որովհեաւ աշ-  
խարհ կոչեցեալ իրն՝ ոչ այնքան մանուկ  
է հաստկաւ, որ նորա երեսին տեղի ունե-  
ցած անցքերն՝ լրիւ չափ ընկած լինին  
պատմական ժամանակին շրջանի մէջ, և  
ոչ առածութիւնն այնքան անձուկ, որ  
հնար լինի կարծիկ՝ թէ պատմութեան  
զիտակն արդէն ամենայն ինչ թափանցել  
է, որչափ նորա այսօրն է անկուպար, նոյն  
պէս նորա երեկն է անսահման, ոչ հա-  
մայնահաւանիք (օիթիմիսթք) կարեն ա-  
մենայն ինչ հաւանեցուցանել ամենեցուն,  
համոզելով զամենեսին, ոչ համայնա-  
մերք (պիսսիմիսթք) կյաջողն վասն  
ամենայն իրաց երկրայութիւն և կասկած  
սերմանել ի միտս ամենեցուն: Ես ոչ  
պնդեմ թէ՝ Ես և Մելքիսեդէկ մի են,  
բայց Եղաց Մարդար Զաքարեանց Խո-  
ջենց՝ Անկարպեարբուրդ ապագրեալ  
Յանկ Կտակարանաց զրի մէջ՝ զրել էր  
իւր կամ այլոց կարծիքն, թէ Մելքիսե-  
դէկ էր Եսի Աեմի: Եթէ կարէր Մելքի-  
սեդէկ Աեմ լինել, ևս առաւել կարէր

(\*) Երուսաղէմ՝ տուն խաղաղութեան. Սա-  
ղէմ, Սալէմ՝ խաղաղութիւն, (Խրուշեայմ.):

(\*\*) Մորթման:

(\*\*\*) Լենորման:

Եց Ամսել թագաւոր խաղաղութեան, թագաւոր արդարութեան, անհայր՝ անմայր, չհամարեալ յազգս, և նա միայն կարեր ասել՝ թէ առ ազատ միալ խաղառնալեաց վերահաս ջրհեղեղի հրամանաւ Աստուծոյ կառուցի տապան, և ծովագնաց եղէ:

Օուր է և մեր Խզդուբար թագաւոր միայն Ասորեսատն որոնելին Արքահամուօրերն շատ թագաւորք կային, որոց չըրքն հնդից վերայ արշաւեցին, և ինքեանք Արքահամին ասել էին ի Քերրոն (ԿարիաթՎերոն) թէ այր թագաւոր ես ի միջի մերում:

Օարմանք չէ թէ այս աւանդութիւնն մնացեալ լինի այս ճանապարհաւ, որ ծերունի Աիզիթ (Քսիսութը, Եց, Մելքիսեդեկ) ասել է Արքահամին (Խզդուբար, Աստուածատուր, Աստուածապաշտ) թագաւորին՝ թէ Աստուծոյ կառուցի փրկարար տապանն, որ յետոյ հանդեաւ Աիզիթ (Վասիս) լերան վերայ: Եւ այս աւանդութիւնն ըերնէ բերան գնալով՝ մինչ սեղագրութեան հանելին՝ Արքահամ աստուածապաշտն Խզդուբար դառաւ, Քսիսութը՝ Եց, Մելքիսեդեկին՝ Աիզիթ փոխուեցաւ, և Ասսիս՝ Աիզիթ ձեացաւ \*):

Եցս Պ. Ամիթի գիւտն, և Պ. Գառլինսոնի ուշադրութեան արժանաւոր խոր-

(\*) Եթէ Մովսիս հնագիտականն աղբւրներէն մէկն Մեհենական Եղիստայրն կարծենք, այն նշանագրաց մէջն ևս հնար չէր սպրոցել այս զանազանութեանց, Միթէ Մովսէս, Մոսէս, Մոսէս, Մոշէ, Մոշէ, Մուշէ, Մուզէս, Մուզէս անուանք պահել են իւրեանց յատկութիւնն, կամ ամեներին ի ջոյ հանեալ կնշանակե՞ն:

Հրդածութիւնն մեզ աներկրայ յոյս կմատակարարէ, որ ինչպէս Պ. Մորթմանի և Պ. Շուլցի սեպագրական զննութիւնները բաւական բացայացառութիւն տուին Արքոյ Մովսիսի խոր. Հայոց պատմութեան մէջ Մար. Խրամայ Կատինայ հնախօսութիւններէն արած քաղուածոցն, և ընդարձակ ճանապարհ բացին մեր աղգային արևելագէտ և բազմահմուտ զիտնականի՝ Ա. Պ. բրդոյ կայսերական Համայսարանի վարժապետ Քերոբէ Տէրպիւտոսեան Պատկանեանի հանդէպ մանրակիւտ խուզարկութեամբ հետազօտել և ուզուել Պ. Մորթմանի ենթագրական կարծիքն, որ ի Վասիսն Պօլսոյ, և յԵրարատն Եջմիածնի և յայլ օրագիրս ուղերձեցան ազգիս, ինքեան ուղեցոյց ունենալով Պ. է լագարդի և Լ. ենորմանի նման համաշխարհական անձանց և հնագիտակ գամարձակաց ուսումնական արևելագիտակ զննութիւնները, որք միուրերան խոստովանում են՝ թէ զես Պանայ սեպագիր արձանաղբութիւններին, որ երեմն Արմենիական կասվէին, այժմ պիտի կոչվին Արմողական կամ Արարատական, չեն բացարարուած. և Հայազգի Պ. Պալւատ Շիլմազանի Եջմիածնի Արարատ հանդիսագրութեան այն ինչ անցեալ 1872 Դեկտ. ամսաթերթի մէջ մատնցոյց եղեալ՝ մեր ազգի ու խտական Աւարայրի կողմերը՝ Պակուայ բարձրաւանդակ վիմաց վերայ գծեալ նշանագրերն, որ յայտնի չէ թէ սեպագրաց կամ բևեռաղբաց՝ Սորեսսանական, թէ Տարիշական, Ոկութական, թէ Ալարողական կամ Խրանական, և նոյցա՝ Փօնետիկական կամ ալաֆոնական որ տեսակաց արգասիք են, ո-

բովշետե՝ դեռ հրահանգեամ աշխարհի սեպհականութիւն չեն դարձել ու նոյնպէս օրբստորէ կիարատեն մեր սիրական հայրենեաց ամենակերպ հետաքրքրութեան արժանաւոր հետապատում անցից վերացէն՝ ոյն աղջամուղջն, որ յոյժ հիմնաւոր առիթներով անզի կուտայ մեղ և բաղմաց մասյոյդ լնիլ:

Ա, թէ ի՞նչ է պատճառն որ մեր հայրենիքն երկու անուն ունի, որոց մին չայտատան՝ մենք չայքս միայն ի կիր կառնունք, և օտար աղջք չեն ուշազիր լնիլ ձանաչել, և միւսն՝ Արմենիա, որ օտար աղջքի պատմաբանք գործ կածեն, իսկ մեք չայքս՝ մեր նախնեաց սովիերից մէջ չենք դանում, և միայն ենթաղրութեամբք շատանում:

Ի, Ի՞նչ է շարժառիթն, որ մեր չայոց աղջն նոյնպէս ունի երկու անուն, մին չայ, որով միայն մենք ինքներս զմեղ կանուաննեք, և երբէք օտարաղջեաց բերանէնք լսիր, և միւսն՝ Արմէն, որ օտարվը մեղ կուտան, և մենք միայն ի թարգմանութենէ կունենանք այն իսկական պատճառին միտք չգնելով, և ինչպէս Գաղղիացին և Գրանկը խառնել ենք, նոյնպէս և չայն և Արամեանն մտաց անդիտակցութեամբ անփոմեան, չայկազնեան, Արամազնեան, Արքանազեան զմեղ ինքեանս կկումք՝ դիւցազնական դարերի կարծիքական բանասահեղութեանց ծնունդքն՝ մեր նախնեաց կարգն զնելով, ինչպէս որ եթէ Խորայէլացիք իւրեանց նահապետ զընէին զՓղշատայցիս, որոց երկիրն Պաղեատին անուամբ ժառանգեցին:

Գ, Օի՞է զի Արարատի անունն, որ մենք սուրբ զրոց հիման վերայ, և ի նախնեաց՝ աղջէ յազդ և որդւոց յորդիս անցած մնացած աւանդութեանց յեցեալ՝ Մասիս, կամ Մասսայ - սար զիտենք, սար աղջաց սեպագրաց վերայ հիմնեալ մատենալը ութեանց մէջ Ուրարդի, Ալարուդ, կամ Ուրազդայ կոչվի. Խուզանդ՝ Արարատ կասէ, և նոյն կողմանց լեռնաբնակ վայրենի աղջերը կամ այլազդիք Աղրդաղ կկոչեն, և շրջակայ չայերէն չեն սովորիր նորա անուննեւ Եւ ինչպէս Արարադ է կրծատեալ Արարատ Աար, կամ Աար Արարատ բառից, յայանի է որ Աղրդաղ ևս է այլազան եղանակ հնչման Արարատայ. արդ քննելի է թէ արդեօք Աղրդաղն է երիցագոյն, և ի նմանէ հայցուցեալ Արարատն կամ Ալարուտն, թէ Ալարուտ է արմատն, և ի նմանէ է ձեւացեալ Աղրդաղ, կամ յԱրարատ արմատոյ է բղիսեալ Ալարուտ և Աղրդաղ, կամ նախ Աղրդաղ և ապա Արարուդ:

Դ, Ուր չայ աղջի ծագումն, որ մենք խոր. և Մարիք. զրուածքներէն զիտենք և համոզուած ենք՝ թէ է չայէն, որ էր ժամանակակից Աշտարակաշինութեան և Կերողայ և Ըսուրայ, ընդէր հնապատում աւանդութեանց մանրախոյզ զըննութիւնն և անաչառ քննադատութիւնն աւելի չայկակին կարծել կուտայ, քան թէ չայէն, հազար հինգ հարիւր տարւոյ չափ ժամանակակ մեր աղջի հնութենէն պակսեցնելով, որով ոչ միայն մեր նախահայր Խորդոմայ որդի չայէն, որոյ անուամբ մենք չայկազն ենք կոչվեմ, և ոչ չայկակազն, այլ և ի նմանէ սերեալ եօթներորդ ընձիւղն Արամ՝ որով մենք և

օտարք համաձայն՝ զմեղ՝ Արամեան կամ Վրամազնեան կանուաննենք, երեսում են բանաստեղծական և ոչ պատմական անձինք, որպէս անձնաւորեալ ազգք կըողք Հայ և Արմէն անուաննեան Խւ որ առաւելն է, Արամ զոր մենք ցարդ համարել ենք և համարում ենք ժամանակակից Ամենուի, Քրիստոնէն իրը 2000 ամօք յառաջ, Սորեստանեան և Անայ սեպագիրք ցոյց են տալիս թէ էր Քրիստոնէն միայն 850 ամօք նախընթաց, իսկ նորա անմիջական յաջորդն Աեդուրի՝ 831 ամօք, այլ Լուտափիրի, և Բելլեգուրիս Ե. և Խղրուինիս Ա. են ութերորդ յառաջ քան զՔրիստոս՝ դարու մարդիկ։ Աարդայ, և Մինուաս Ե. և Աւրսայ, և Արգիստիս, և Խղրուինիս Բ. և Էքսարիս, և Բելլեգուրիս Բ., և Խղրուինիս Գ., և Մինուաս Բ. գոլով վեցերորդ յառաջ քան զՔրիստոս՝ դարու մարդիկ, զորս Գ. Մորթման համարի, սկսեալ ի Լուտափիրի՝ Ակայորդի մեր, և Պարոյր, և Նրաշեայ ելն. ասեն ոչ Հայոց, այլ Ալարոդիան, այս ինքն՝ Արարատեան թագաւորք, որք յիններորդ դարէ սկսեալ՝ նուաճեալ էին զմանը թագաւորութիւնս Անայ, Ալճիշյ, Կարնոյ և Մելիտինց:

Ե, Ե՞ր վասն մեր ազգն և ազգութիւնն՝ որ ըստ պատ. Մոլ. Խոր. և Մարիր. Հայկի և նորա գերդաստանի հետ միասին ցարդ Իաբիլոնէն եկած ենք համարել, այժմ պատմական հետազօտութիւններն Փախզիայէն եկած են գնում, իրը թէ Մեդիայէն կամ Մարաց երկրէն Իրանական ծագումն ունեցող ազգ՝ Թարրակից վրայէն անցնելով գէպ ի Փոխզիա, նոյնազէս Զիրանեան համասեր Փը-

ոխւզացի Հայկըն յարեւմտից յարեւելս են մզել, և նորա ևս ընիկ Վլարողացի բնակչաց գէպ ի հիւսիս վարելով՝ մնացորդն իւրեանց հետ ի մի ձուլեալ, անհետ են արել նոցտ վաղնջուց լեզուն, կրօնն, ազգութիւնն և աւանդութիւնքն:

Օ, Ա ասն Ե՞ր Ասորեստանեան սեպագրութեանց մէջ Հայաստան կոչուած է Արմենիա և Աւրասմու և երբեմն Մայր:

Ե, Եթէ մեր ազգի անունն օտարք Արմէն են կոչել՝ իրը թէ Արամ անունէն հանելով, ի՞նչ է պատճառն որ Արամ անուան մէջ նու տառն չկայ, և Արմէն կամ Արմենիա անուանց մէջ ուստի է մտել:

Ը, Ի՞նչ է պատճառն, որ Ա ահագն՝ պատմական, և ոչ դիւցազնական ժամանակի Տիգրան Հայթագուրի որդի համարուածն՝ Մոլ. Խոր. և Մարիր. զըսետակի, նոյնազէս բանաստեղծական անձնն է համարվում արդի պատմական անկողմնակալ խուղարկութեանց մէջ, և այն՝ Երբ նէր Երիշն երգն՝ արեւու ծագման այլաբանորէն նկարագրութիւնն՝ իսպան Ա ահագնէն հեռացնում են՝ որպէս ոչ երբէք նորան պատշաճեալ ինչ :

Արովշետե այսոցիկ և այլ ևս սոցին նման աւարկայից վերայ են ըստ մեծի մասին լեզուագէտ և քաջուս Քերորէ զիւնականի՝ Համալսարանական վարժապետի խորհրդածութիւններն, որ իւր անգին աշխատասիրութեան Հայոց հին ամսոց անուանցքննութեանց և բացարութեանց, և ազգային պատմութեան հետաքրքրական գիտելեաց մէջ, իւր անխոնն երկամիք դաշտ և պատկերացուցած Հայոց լեզուի ծագման և կազմութեան օրինաց կանոններով, քան զոր յաւետ պարզ և սասոյդ

գեռ ևս մեր ազգի մէջ չէ տեսված նմանութիւնակ հետազոտութիւն, Իրանական, Զենդեան, Պալհական, Աբանքը և առաջ առաջ առաջ համեմատութեամբ լուծել է այն դարաւոր խնդիրն կամ կիմիան, որ Գորդեան հանգուցի նման՝ միայն նորա բազմահմատա տեղեկութեանց սրով յաջողեցաւ խզել, մեր բազմապատճիկ հնութեանց նովաւ իսկապէս ուսումնական և ի զրական ուսմանց բղիւեալ լոյս կը ձեռէ, վասն որոյ քաջայշու պիտի լինի՞ք, որ մի միայն առաւել ծիշտ հետազօտութիւնք սեպազրաց կարեն համապատճ գին յատկացուցանել այն Մետուդին երկասիրութեանց, որք ազգապարծանք պսակօք փունջ կազմեն ի գլուխ նորա, որպէս ազգային հոչակաւոր գիտնուականի. այլ վասն այսքան մեծարեալ լուսաբանութեանց նորա ունիմ ի մտի առանձին հատուածով ելանել ի հանդէս, և նորա գեղեցիկ և ազգապիտան գիտելիքն նուիրել ի սեղան ազգի՝ ոչ յետ բազմաց ինչ աւուրց:

ԵԵՐՈՒՆԻ ԳԱՐՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ.

## ԱԶԳԱՅԻՆ

ԱԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏ.

Ի 12-ն ամսոյս Ա. Կ. Հ. Հայրապետ ամենայն Հայոց զնաց Մայր Շ. Ժոռէս  
16—18 վերստի չափ հեռի ի Բիւրական յօդափոխութիւնն:

| ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒՄ       |   | Ի ՆՊԱՍՑ ՀԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅԵՍ |    |
|-------------------------|---|----------------------------------|----|
|                         |   | (ՀԱՐՄԱԿԻՔ-ՆՈՐ)                   |    |
| Գավիթ Գասպարեանց.       | . | .                                | 5  |
| Յարութիւն Գասպարեանց.   | . | .                                | 5  |
| Ազէրսանդր Գասպարեանց.   | . | .                                | 4  |
| Սիմէօն Գասպարեանց.      | . | .                                | 5  |
| Գասպար Գասպարեանց.      | . | .                                | 2  |
| Անտօն Գասպարեանց.       | . | .                                | 5  |
| Յովսէփ Գասպարեանց.      | . | .                                | 4  |
| Գրիգոր Գասպարեանց.      | . | .                                | 2  |
| Յօհաննէս Գասպարեանց.    | . | .                                | 2  |
| Կարապիտ Գասպարեանց.     | . | .                                | 4  |
| Խաչիկ Գասպարեանց.       | . | .                                | 2  |
| Սարգիս Հալանեանց.       | . | .                                | 5  |
| Դօմիլուի Հալարեանց.     | . | .                                | 2  |
| Սարդին Շնահեանց.        | . | .                                | 2  |
| Մելքոն Ղափանեանց.       | . | .                                | 4  |
| Աստուածատուր Պոպովիանց. | . | .                                | 5  |
| Կարապիտ Գասպարեանց.     | . | .                                | 4  |
| Գէորգ Եագիմեանց.        | . | .                                | 4  |
| Յարութիւն Պարոնեանց.    | . | .                                | 4  |
| Գրիգոր Գասպարեանց.      | . | .                                | 4  |
| Զաքար Այվաղեանց.        | . | .                                | 2  |
| Գարրիէլ Կուսիկեանց.     | . | .                                | 4  |
| Կիրակոս Կիրակոսեանց     | . | .                                | 4  |
| Մարգար Պոպովիանց.       | . | .                                | 4  |
| Յովակիմ Ասպանեանց.      | . | .                                | 4  |
| Գէորգ Սաֆարեանց.        | . | .                                | 4  |
| Յակոպ Շահնազարեանց.     | . | .                                | 4  |
| Անտօն Պոպովիանց.        | . | .                                | 4  |
| Միհնաս Գետրոսեանց.      | . | .                                | 4  |
| Նազար Գասպարեանց.       | . | .                                | 4  |
| Խաչերէս Հալանեանց.      | . | .                                | 55 |
| Գրիգոր Գարրիէլեանց.     | . | .                                | 4  |
| Սարգիս Այվաղեանց.       | . | .                                | 4  |
| Յովհաննէս Հալանեանց     | . | .                                | 2  |
| Առաքիլ Ապանեանց.        | . | .                                | 4  |
| Յովհաննէս Կուսիկեանց    | . | .                                | 4  |
| Խաչատոր Սարդանեանց      | . | .                                | 4  |